ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի մայիսի 29-ին տեղի ունեցավ 7-րդ «բ» դասարանի հերթական ծնողական ժողովը,որին ներկա էին 21 ծնող,բացակա՝ 2 ծնող:Ժողովը վարում էր դասղեկ Վարդիթեր Քոչարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1)Երկրորդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում:

2)Ընթացիկ հարցերի և էքսկուրսիայի քննարկում:

1.Լսեցին.- Երկրորդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփման հարցը:

Դասղեկը ներկայացրեց դասարանի ընդհանուր վիճակը, ամբողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքը: Ներկայացրեց դասարանի առաջադիմությունը:Դասարանում սովորում են 23 աշակերտ, որից 4-ը գերազանց առաջադիմություն ունեն:

1. Բաղալյան Լուսինե Ռոբերտի
2. Բաղալյան Մերի Ատոմի
3. Պետրոսյան Անի Պետրոսի
4. Սարգսյան Էլեն Տարոնի

Դասարանի աշակերտներից 10-ը հարվածային են,որոնց մեջ կան աշակերտներ, որոնք միայն 2 առարկայից ունեն 8 գնահատական:Դասարանի որակական ցուցանիշը մոտավորապես 61 տոկոս է: 23 աշակերտներն էլ փոխադրվում են 8-րդ դասարան:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել աշակերտների ուսումնական գործընթացին,որովհետև դասարանում կան աշակերտներ,որոնք կարող են ավելի բարձր առաջադիմություն ապահովել:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցերի և էքսկուրսիայի քննարկում:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված կարգապահության հետ: Ընդհանուր առմամբ երեխաները կարգապահ են,բայց պետք է ուշադիր լինել ցանկացած պահի: Քննարկվեց նաև տարեվերջյան էքսկուրսիայի հարցը: Առաջարկվեց երեխաներին տանել էքսկուրսիա դեպի Սարդարապատ:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել երեխաների կարգապահությանը: Որոշեցին նաև ,որ ծնողական խորհրդի անդամները կզբաղվեն էքսկուրսիայի կազմակերպչական հարցերով (անհրաժեշտ գումարի հավաքում,տրանսպորտի և սնունդի հետ կապված հարցերի լուծում):

Ծնողական խորհրդի նախագահ՝ Լիլիկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Անի Դավթյան